[illegible] ՏԱՐԻ № 1

ԲԱՆԲԵՐ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱՍՏՐԱԽԱՆ, ԿԻՐԱԿԻ, ՄԱՅԻՍ 24. 1915 Թ.

Հասցէն՝ Աստրախան, „ԲԱՆԲԵՐ“-ի խմբագրութիւն
Հեռախօս № 182.

Астрахань, Редакція «БАНБЕРЪ».
Astrakhan Rebaction „BANBER“.

Телефонъ 182.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ՝

Աստրախանում	3 ր.
Աստրախանից դուրս	4 ր.
Արտասահման	12 ֆր.

Յայտարարութիւնների վճարը՝

Առաջին երեսում իւրաքանչիւր տողատեղը	20 կ.
Չորրորդ երեսում	10 կ.

Երկից աւելի և տևողական յայտարարութիւնների համար առանձին պայմանով։

ՍՈՒԱՆՁԻՆ ՀԱՄԱՐԸ 5 Կ.

...գրութեանս պայմանները.
...ակիցներին և Թղթակիցներին խնդրւում է—յօդ...ել պարզ, մաքուր և թղթի առաջին երեսի վրա։ ...թիւնը իրեն է վերապահում ուղղագրութեան ձևը և փոփոխութիւնները բացի պայմանաւորուած յօդուածներից։
Վերադարձւում են բանաստեղծականներն ու այն յօդուածները, որոնք երեք թերթից աւելի ծաւալ ունեն։
Հասցէները փոխելու համար պէտք է ուղարկել 45 կ. վճար մարկաներով։
Բաժանորդները, թերթը չստանալու դէպքում, պարտաւոր են տեղեկացնել, հակառակ դէպքում խմբագրութիւնս իրեն պատասխանատու չէ համարում։

...մայիս

...ց մամուլը չի ...յսպիսի տխուր, ան...ճակի մէջ, ոչ մի երկ...ակութիւնը այն չափ... անտարբեր չէ դէպի ..., ինչպէս դա հայե... Անուրանալի փաստ ... որ ոչ մի ազգի մէջ ...խատաւորները, լրա...նպիսի չարքաշ, զր...լի, հալածուած, չը... և անշնորհապարտ ...ում չեն գտնւում, ...ձևալ հայերիս մէջ. ... զանազան վայրեր... խուլ անկիւններում ...տարակելու. բազմա... են եղել ոգևորուած ...խմբերի կամ անհատ...անց, սակայն ամեն ան...ան զժնդակ իրակա...ել է շիջելու նրանց ...ութիւնը ու եռանդը, ...ութեան պատրաստակա... միջոցից յետոյ ...երջ տալ իրենց, ...սկսած, ձեռ...հոգին պարտ-

Վերջին տասն տարուայ ընթացքում լոյս տեսած և կարճատև գոյութիւնից յետոյ դադրած բազմաթիւ պարբերականների կենդանի օրինակը մեր առաջն է։

Հայը չի սիրում հայերէն թերթեր կարդալ պնդում են շատերը։ Գուցէ դա այդպէս է, սակայն չը պիտի մոռանալ, որ դրան որոշ չափով նպաստել է նաև հէնց ինքը հայ մամուլի մի որոշ թերև մեծագոյն մասը իրա բռնած մերթ նեղ—թայֆայական մերթ տպագրական շիտակ օրգանին անմաքուր և անվայել ընթացքով։ Եսը, անձնական գձուծ հաշիւները, բանակռիւների խայտառակ ձևը, ոսկէ հորթի խնկարկութիւնը, քամէլէօնական գունափոխութիւնը, կիրքը մեր մամուլի որոշ մասի հիմքն են կազմում։

Ցաւալի երևոյթ է ներկայացնում հայ մամուլը նաև հասարակութեան զանազան խաւերի հոսանքների, հայեացքների ու տեսակէտների արտայայտութեան տեսակէտից։

Հայկական կեանքում կատարւող երևոյթները, ժողովրդի կենսական պահանջները, նրա անտեսական հասարակական կացութիւնը, իղձերը, ցանկութիւնները, միակողմանի, խեղաթիւրուած լուսաբանութիւն են գտնում ժամանակակից հայ մամուլում։

Ներկայումս ռուսահայերիս մէջ գոյութիւն ունեցող մի քանի օրաթերթերը և պարբերական հրատարակութիւնները թառած հայկական բուրժուազիայի լայն թևերի տակ և նրանից, կամակատարութեան համար նպաստաւորուած, բոլոր հասարակական և ազգային խնդիրների համար ունին միմիայն մի պրիզմա, մի տեսակէտ—բուրժուական—որով դիտում են լուսաբանել ամեն ինչ, ներկայանալով—ըստ իրենց յայտարարութեան—հայ ժողովուրդի հայեացքների թարգմանը, արտայայտիչը։

Բայց որքան հեռու է դա իրականութիւնից։ Բուն ժողովուրդը, դեմոկրատ մասսան բոլորովին այլ կերպ է մտածում, նրա դիրքը բոլորովին տարբեր է բուրժուազիայից և եթէ այդ բանը աւելի ռելիեֆ կերպով հրապարակ չի գալիս այդ էլ շնորհիւ զուտ ժողովրդական օրգանների բացակայութեանը։

Ահաւասիկ այդպիսի մի օրգանի բացը թերևս փոքրագոյն չափով ծածկելու համար հանդէս է գալիս «Բանբեր»ը ձգտելով իր համեստ ույժերի և տիրող պայմանների ներածին չափով նպաստելու ժողովրդական լայն խաւերի շահերի պաշտպանութեանը և թոյլ չը տալու որ մասսայի կենսական շահերը կուլ գնան փոքրամասնութեան կամայականութիւններին։



ՎԱՆԻ ԳՐԱՒՈՒՄԸ

...ուս-տաճկական պատերազմի ընթացքում Վանի գրաւումը թերևս ...ափոչար երևոյթն է կազմում։ ...Վանի պատմական ճակատագր... ...տոյ, երբ մեր զօրքերը սա... ...ալիլ բէյի ջարդուած բանա... ...ու մասը բաժանելով նահանջ... ...րայի և Վանի ուղղութիւն... ...ներով N-ի զօրամասը մի ...արագութեամբ հետապնդ... ...փոքր թշնամուն գրաւեց ...Սարայի դաշտը, Բաշկալէն ... և մտնելու Վանի պարիսպներ... ...ապրիլի սկզբներին ազատագրած հայ ժողովուրդը մի ամսուայ արիւնոտ կռիւներից յետոյ յաջողեցրել էր գրաւել միջնաբերդը և զէնքի մթերանոցները և սրտատրոփ սպասում սուս յաղթական զօրքի ժամանումին։ Վանի հայ ազգաբնակութիւնը փառաւոր ընդունելութիւն ցոյց տւեց ազատարար ռուսական զօրքին և նրան յանձնեց քաղաքի բանալիները։

Վանի գրաւումը մի վերին աստիճանի մխիթարական երևոյթ է հայ բազմաչարչար ժողովրդի համար, որի սարկական կապանքները, և դարաւոր բիրտ ասիական լուծը ջարդւում են ռուսական յաղթական զօրքի յառաջխաղացումով։ Վերջին տեղեկութիւնների համաձայն մեր զօրքերը խիզախօրէն ընթանում են Մուշի և Բիթլիսի ուղղութեամբ և մենք վստահ ենք որ հեռու չէ այն օրը, երբ այդ հայաշատ վայրերը ևս կազատւին արիւնարբու թիւրք-քրդական մահացուցիչ ճիրաններից։

Վանը Տաճկաց Հայաստանի ամենահայաշատ քաղաքն է ունի մօտ 40.000 բնակիչ որից 25.000 հայեր են։ Տաճկահայ ազատագրական գործում, Վանը առաջնակարգ դեր է կատարել։ Այդ տեղ է սկսել հայ յեղափոխութեան խմորումը, գաղափարական ձևակերպումը։ Վասպուրականի վերջին երեք տասնեակ տարիների պատմութիւնը լի է արիւնոտ էջերով։ Համիդի նախաձեռնած հայկական ջարդերը ամենալայն գործադրութիւնը գտան այդ բազմահայ նահանգում։ Արեան, արտածութեան այդ սև օրերին Վասպուրականի յեղձուցիչ մթնոլորտում յաճախ պոռթկացել է հայ ժողովրդի ըմբոստ ոգին, որի արտայայտիչներն են եղել Մարտիկի, Աւետիսեանի, Փեսայի, Զարամացի և այլն նման գաղափարական գործիչներ։

Տաճկական սահմանադրութիւնից յետոյ Վանը ևս փորձեց օգտուել ազատութեան կարճատև շրջանից։ Հիմնեցին մի շարք գրադարաններ („Մարտիկ“, „Ազատութեան Լոյս“, „Աւետիսեան“), թերթեր („Աշխատանք“, „Վան Տոսպ“, „Լոյս“)։ Բացւեցին վարժարանները և այլ միջնակարգ և տարրական դպրոցներ, քաղաքական ակումբներ։ Սկսել էր կուլտուրական մի խոշոր և բեղուն աշխատանք, սակայն վերջերս „երիտասարդ թիւրքերի“ սկսած հալածանքները եկան մեծ չափով կասեցնելու, հարուածելու եղած ձեռնարկները։

Այժմ երբ Վասպուրականը ազատւած է թիւրքական կաշկանդիչ շղթաներից, երբ ստեղծւում են նոր մարդավայել պայմաններ և հայ ժողովրդին հնարաւորութիւն տրւում անկաշկանդ կերպով հրապարակ հանել իր ստեղծագործող ոգին, կուլտուրական հասարակական ընդունակութիւնները՝ կասկած չունենք, որ շուտով Վանը կը դառնայ մեր խոշոր մտաւոր-կուլտուրական կենտրոններից մէկը։

Վ. Ղ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՀԵՐ

Երբոր սրանից մօտ քսան տարի առաջ Սուլթան Աբդիւլ Համիդը ամբողջ Հայաստանը արեան ծով դարձրեց, 19-րդ դարու ամենամեծ մարդասէրը և փոքրիկ, ճնշուած ժողովուրդների քաջարի պաշտպան Գլադստոնը „Մեծ Մարդասպան“ կոչեց Եըլըզի կատաղած գազանին։

Այդ պատուանունը մինչև այսօր էլ մնացել է և յաճախակի յիշատակւում է պատմութեան մէջ՝ գալոց սերնդին անորակելի եղեռնագործի օրինակ հանդիսանալով…

„Խեղճ“ Աբդուլ-Համիդը երբեք չէր կարող մտքով անգամ անցկացնել, թէ իրանից յետոյ գալու է մէկը, որը պիտի գերազանցէր իրեն ոճրագործութեանց մէջ։

Վիլհէլմին համեմատում են, և շատ իզուր Ներոնի հետ… ինչէր արել Հռոմի այդ թշուառ, պսիխոպատ վեհապետը… Միքանի տասնեակ հազար քրիստոնեաների կեանք. արեան մի քանի յորդահոս վտակներ… և ուրիշ ոչինչ….

Ինչ նզովք կարող է ստեղծել մարդկային հանճարը, ինչ համեմատութիւն կարող է գտնել ամենամեծ փիլիսոփան, ամենահանճարեղ բանաստեղծը, անսպառ մարդակեր, որպէսզի պատկերացնէին միլիոններով մահ անգամ այն „սարսափների“, որոնց ստեղծողն է հանդիսացել բազմակողմանի ընդունակութիւնների տէր այդ դարհուրելի „քաղաքակրթուած“ հրէշը, արիւնախանձ „Kaiser“ը…

1908 թ. երբ սահմանադրութիւն հռչակւեց Տաճկաստանում, գերմանական սոցիալ-դեմոկրատական կենտրոնական օրգան „Vorwärts“ը առանձին հրճուանք արտայայտեց պատմական այդ խոշոր, դարագլուխ կազմող երևոյթի առթիւ, աւելցնելով հեգնաբար, թէ այսուհետև Սուլթանի երկրում այնպիսի քաղաքականներ, ազատական կարգեր և սահմանադրութիւն կը հաստատուին, որոնց առաջ կամաչի „Պրուսիայի Սուլթանը“։ Սակայն շատ չանցած պրուսական „քաղաքակիրթ“ Սուլթանը… նա մազաչափ անգամ չը խորշեց իր „միակ սրտակից բարեկամի“ արիւնառուշտ քաղաքականութիւնից, և եօթ տարի անցնելուց յետոյ, [illegible] Դոլմաբաղչէի [illegible], խելագարօրէն [illegible], տալով նրան նախանձելի գործելու, եկեղեցիներ պղծելու, քաղաքակրթութեան հրաշակերտները կործանելու, մանուկներ կոտորելու, կոյսեր բռնաբարելու, արեան գետեր հոսեցնելու…

Երբ որ մի վարկեան յիշում ես քաղաքակրթութեան, գիտութեան, փիլիսոփայութեան և գեղարուեստի այդ հռչակաւոր աշխարհը, երբ պատկերացնում ես մի Շիլլեր, մի Գեօթէ, մի Աշխենգա, մի Լայբնից և մի Կանտ, մարդկային մտքի և հոգու այդ մեծ տաղանդներին, ու դրանց հետ մեր-


...ւմ մի Վիլհելմ, մի Մոլթկէ մի ...երոց որոնք հանդէս են եկել ...ձեռ սրբութիւնները ոտքի տակ ..., ամենանուիրական յշատակա... ...երը սրբապղծելու — պղծում, ...կատում ես այդ տարօրինակ, այդ ...ավոր մեծ պարադոքսի, մեծ ...ղրութեան պատճառը չը կարո...ալով հասկանալ...

...ութիւնը կանգ է առել մարդ...թեան բարեկար հանդիսանելու, ...ատեղծի բնարը հնչում է ոչ գե...ին, ոչ վեհին խրախուսելու, ...իր եղբօրը, իր մերձաւորին ...րելու, ոչնչացնելու պիղծ և ...րդ գործը հրահրելու, դաշան դաշ... Ազատութեան, եղբայրութեան ...ւասարութեան վսեմ գաղափար...ն յաջորդել է պրուսական ինն...երի խայտառակ «Infanterie, kavalerie և artillerie» նշանաբանը...

...7 միլիոն պատերազմի դաշտում ...յանդիման կանգնած են այսօր մի ...նց խողխողելու անյագ ծարաւով... ...ոլորը մի հրէշագործի, Բիսմարկի ...անաւոր յաջորդ Վիլհելմ եղեռնա...ծի բմահաճոյքի պատճառով....

...ակայն պատմութեան դատաստանը ..., այնուամենայնիւ գալիս է իր ...ւիրանքներով... և այն ժամա... „Deutschland, Deutschland über alles, über alles in der Welt" օրհներ...թեան փոխարէն „Deutschland, Deutschland unter alles" նզովքը կըկար... պրուսական ոճրագործների անարգ ...րին...

ՍԻՄ. ՀՈՎՈՒԵԱՆ



...ԻՐԹԻԱ, ԵՒ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹՈՒՐՔԵՐԸ.

— —

...ժբաղդ է այն երկիրը, ուր ժողո...րդի բաղդը տնօրինելու իրաւ...ը ուղղութապաորէն իրենց ձեռքն ...ձգում զանազան պատահական ...կցրունք կամ նեղ անձնական ...երի հետապնդող պատահական ...ականութիւններ։ Այդ դէպքում նոյն ... ամենափոքրն բաները, գեղեցիկ ...աումները ու փայլուն ծրագիրնե...չեն կարող երկար ժամանակ ծած... նրանց հեղինակների իսկական ...ը և ֆիզիոնոմիան։

...յդ դրութեան ամենափայլուն օրի... է հանդիսանում ներկայումս ...րայլող և կորստեան անդունդին ...ած Թիւրքիան։ Կար ժամանակ ... Թիւրքիան համատարած սպան...ցի էր վերածուած։ Ամեն կողմ ...ում էր բիրտ ոյժը, Թալանը, ...ռածութիւնը։ Նախադանի քաղա...անութեան կարմիր օրերն էին ...ռնութեան այդ կլասիկ երկրում։ ...յ յանկարծ մի գեղեցիկ օր բռն... Թիւրքական «յեղափոխութիւնը»։ ...ելով կարմիր Սուլթանը և նրան ...փոխանելու «պզտատամիտ» «առա...ում» երիտասարդ Թուրքերը, եղ...բայրութեան, ազատութեան հաւասա...թեան գեղեցիկ բառերը շրթներին, ...ի վերածնութեան, ազատութեան ... ծրագիրները դրպաններում։ ...իւրքիայի ժողովուրդները մի բոպէ ... քաշեցին, կեանքի, գոյ...պատւի ապահովութեան զգացին ...ոտացին չտեսած խոստումներին, ...ին որ վերջ դրեց իրենց ...ճներէն ու սկսեցին երազել ... բարիքների, մարդավայել ու ...ղդ կեանքի մասին։ Սակայն ինք...ացման, վարդագոյն յոյսերի այդ ... երկար չը տևեցին։ Ցնծացող ...ը նկան պատալու «պզտատա...» երիտասարդ Թուրքերի դիմակը։ ...քական ուռնախրխտների այդ ... իր ձեռքը առնելով պետա... ոչ միայն ոչինչ չարաւ եր...ծրագրման ու վերածնութեան ...րը իրաւամբ պզտում էր ... եղած փոքրն յոյսապարու...րեցհարցմա ժողովուրդը,

այլ ընդհակառակը Ահմեդ-Րիզա—Թէլաաթ-Էնվերեան քլիկը եկաւ աւելի ևս ամրացնելու Թիւրքիոյ սարկութեան կապանքները։ Իրենց նեղ ազգայնական քաղաքականութեամբ, պանիսլամիզմի յետադէմ լոզունգներով, հպատակ ազգութիւնները օսմանցիութեան մէջ ձուլելու անյագ տենչով և նեղ կուսակցական շահերի հետապնդումով նրանք Թիւրքիոյ կործանման հիմքը դրեցին։ Իրենց բաց և թաքուն նպատակներին հասնելու համար «առաջադիմական» երիտասարդ Թուրքերը ուրիշ ելք չը գտան բացի Սուլթան Համիտի արիւնոտ ու փորձուած միջոցները գործադրելուց։ Թիւրքիայի գիւրահաւատ ժողովուրդը տարուած վարդագոյն իլլիւզեաներով հազիւ սկսեց ազատ շունչ քաշել ու ոտքի կանգնելու, շարժելու Թոյլ փորձեր անել, երբ լսեց օրուայ դիկտատորների բերնից Վոլգայի վաղեմի աւազակների յայտնի հրամանը „сарынь на кичку" և երիտասարդ Թուրքերի բռունցքի հարուածների տակ ժողովուրդը կրկին գետին փռուեց։

Թիւրքիոյ կիսակենդան գիակի շուրջը սկսեց «երիտասարդների» բուռն անդուսպ օրգիան։ Վերսկսեցին համիտեան շրջանի ջարդերը, ալանթալանը տնտեսական կեղեքումը, կեանքի, գոյքի, պատւի անապահովութիւնը։ Ըմբոստ տարրերին օրպալու, նրանց ոչնչացնելու համար ամբողջ երկիրը լցւեց լրտեսների փոհմակներով։ Արտաքին յենակէտ ոյժ ունենալու համար երիտասարդ Թուրքերը կանգ չառեցին նոյն իսկ երկրի բնական հարստութիւնները յանձնելու իրենց բարեկամ և հովանաւորող Գերմանիային։ Դառնալով Բերլինի վասալը և պրուսական ինկերների կոյր գործիքը, երիտասարդ Թուրքերը չը վարանեցին իմպերիալիստական հովեր առնել, որոնք ամենից քիչ սազ էին գալիս Թիւրքիային և որոնք առաջացնելով Բալկանեան կատաստրոֆան, Թիւրքիայի եւրոպական հողերի մեծ մասի կորուստի պատճառը դարձան։ Երիտասարդ Թիւրքերի դրութիւնը դարձաւ կրիտիկական։ Ընդդիմադիր տարրերը սկսեցին շարժւել։ Ժողովրդի դժգոհութիւնը սկսեց աւելի ու աւելի ձևեր ստանալ և երբ արդէն մօտ էր ժողովուրդի իրաւունքների ուզուրպատորների անկումը, կրկին հրապարակ եկաւ Գերմանիան, մանաւանդ աշխարհի «հաւատարիմ և արտացուէ» բարեկամը և փրկեց իր կամակատար «երիտասարդների» գոյութիւնը։ Փոքր Ասիայում ունեցած հսկայական շահերը և Drang nach Osten ի անյագ ձգտումը ստիպեցին Գերմանիային ոչ մի աջակցութիւն չը խնայել իր բարեկամներին, որոնք „հենւելով այդ աջակցութեան վրայ սկսեցին սանձարձակ կերպով շարունակել իրենց շահատակութիւնները։

Բալկանեան անյաջող պատերազմը ամենախոշոր հարւածը տւեց Թիւրքիայի տնտեսական և քաղաքական կեանքին։

Երիտասարդ Թուրքերի շնորհիւ քայքայւած և ընկճւած Թիւրքիան օրհասական օրեր էր ապրում, երբ բռնկեց համաեւրոպական պատերազմը։ Թիւրքիոյ արիւնոտշտ բարեկամը և նորագոյն այդ մեծ մարդասպանը—Վիլհելմը, ատր բարձրացրեց ոչ միայն հարեան ազգերի այլ նաև նրանց կուլտուրայի և մարդկային իրաւունքների դէմ, արեան և աւերածութեան նեթարկելով քաղաքակիրթ ու շէն երկրները, սրբագործութիւնները, որոնք իրաւամբ կարող էին շարժել Սուլթան Համիդների նախանձը։ Արժանանալով ամբողջ քաղաքակիրթ աշխարհի պարսաւանքին, միայնակ մնացած գերմանական ինկերները սկսեցին դաշնակիցներ փնտռել։ Գերմանական ...ութիւններից յետոյ ... կարող ... ձեռք ... «Նման ... երիտասարդ Թիւրքերը ... ինկերների ... դաշնակցի ... Բէլլառեան ... տալու ... Թիւր...

քիան արեան դաշտը, ուր և նա պիտի գտնի իր քաղաքական մահւան վերջին հանգիստը։ Թիւրքիան այդ բիրտ—ասիական թէօկրատ պետութիւնը երիտասարդ Թիւրքերի առաջնորդութեամբ հրապարակ է եկել պանիսլամիզմի և սրբազան պատերազմի շովէն և յետադիմական լոզունգներով։ Թիւրք և քիւրդ հրոսակները արդէն եռանդով ձեռնարկել են իրենց գերիշխանութեան տակ գտնւող քրիստոնեայ տարրերի ոչնչացմանը, հսկայական ջարդեր առաջացնելով թէ Թիւրքիայի խորքերում և թէ սահմանամերձ վայրերում, Ատրպատականում, Ուրմիում, Սալմաստում, Վանում և այլուր։ «Արդ օրհասական հզօրագոյն կռիւն», մնացող հին Թիւրքիայի և ծերացած երիտասարդ Թիւրք ուռնախրխտների վերջին օրհասական ցնցումներն են դրանք, և քաղաքական մահացումը։

Վ. ՄԱՐՏԵԱՆ



ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ՆՈՐ ՄԱՄՈՒԼԻ ԿԱՐԻՔԸ

I.

Օր աւուր մեր կեանքի անց ու դարձը յամառ կերպով գալիս է ընդգծելու, որ մի նոր մամուլի կարիքը դարձել է խորագոյն խնդիրներից մինը մեր ներքին կեանքում։

Մեր ներկայ մամուլը չափազանց անգունացել է։ Մինչդեռ կեանքի թափը այնպիսի արագ ընթացք է ընդունել, որ կարգին՝ ժողովրդական կարիքների դէթ հեռաւոր արձագանք տւող պարբերականի գոյութիւնը անհրաժեշտ պահանջ է դառնում։

Մեր ներկայ մամուլի մէջ-դա արդէն ընդհանուր կարծիք է—բացակայում է կատարելապէս կեանքի արտացոլումը և էական խնդիրների լուսաբանումը, ուստի և նրա բարոյական նշանակութիւնը նսեմանում է և կրթիչ դերը օր աւուր ընկնում։

Մանաւանդ մի շարք խնդիրների արծածման գլխովին բացակայութիւնը մեր մամուլի էջերից այն աստիճան սովորական երևոյթ է դարձել, որ շատերի կողմից այդ բացը զգում է աննկատելի։

Զուր չէ, որ բուն ժողովուրդը յամառ կերպով իր դժգոհութիւնն է յայտնում և պահանջում. որ մամուլը լրջօրէն զբաղւէ իր կարիքների լուսաբանութեամբ։ Բուն ժողովուրդը եկեղեցական և Թիւրքիայի խնդիրներից դուրս ուզում է տեսնել մեր անմիջական մերձաւոր կեանքի ու անխուսափելի կարիքների լուսաբանութիւնները։

Պարզ է, որ եկեղեցական և բարեգործական խնդիրները եթէ անհրաժեշտ են, նոյն չափով, անգամ աւելին՝ կարևոր են մի կարգ այլ խնդիրներ, խնդիրներ, որոնք վերաբերւելիս լինէին նրա բուն շահերին։

Խնդիրների լուսաբանութեան բացակայութիւնը, ըստ երևոյթին, նկատում են եղած մամուլի շուրջը խմբւած մի քանի աշխատակիցները, հետևապէս դէպքում դժւար էր որևէ բացառութիւն առաջ բերել այն մի շարք յօդւածների տակ, որոնք երևան են գալիս «Մշակում» և պատկանում են մեր ձախակողմեան գրողների գրիչներին։

Սակայն մեր մամուլը իր փոր...ութիւնը յարելէ միայն մի կէտի... է ազգային—եկեղեցական խնդիր... կողմը։ Այդ խնդիրների շուրջ պտ... է ներկայ հայ մամուլը. ուրիշ ... ները միմիայն լռացուցիչ ... կազմում նրա էջերում։ Այդ է ... քէ մի քայլ առաջ գնալ է, բ... առել կուզէ, դրանով պահ մնա... րելու։

Եթէ ... րին է ...

պով։ Ներկայ մամուլի շուրջ խմբւածներին չէ, որ վիճակւած է միմիայն արտայայտիչ հանդիսանալ հայ մտքի ու կեանքի։ Կան մի շարք գրողներ, մտքի թարգմաններ, որոնք կարող են խնդիրների լուսաբանութեան մէջ երևան բերել իրանց լուրջ և ծանրակշիռ խորհրդածութիւնները։

Մամուլի կերպարանափոխութեան խնդիրը բաւականին բարդ է և վիճելի։ Պէտք է պահանջել ոչ թէ ներկայ մամուլի այս կամ այն կերպարանափոխումը և լրացումը ձախակողմեան գրիչներով. այլ աւելի կտրուկ միջոցներ, որոնց շարքում մամուլի անկախ դերը առաջնակարգ տեղ պէտք է բռնէ։

Սակայն մեզ կարող են առարկել, որ այդ պայմաններում ինչ էր ուրեմն

պահանջում։ Այ... մենք մտամբ մի... համարում։ Դրանի... է նախ և առաջ ... տեսակէտ դէպի ... հանդէպն, որ առա... և ընդհանուր կշ... ստեղծի աւելի ... թիւն, քան թէ կ... կայութիւնը։

Սակայն այսպէս ... կայ ելք այդ հավ... խոսք, և որն է այդ ... Բայց այդ մասին ...



✝ ԳԷՈՐԳ ՔԱՀԱՆԱՅ ՄԿՐՏՈՒՄԵ...

ԳԷՈՐԳ Ք. ՄԿՐՏՈՒՄԵԱՆ

Ամսոյս 9-ին Ալէքսանդրօպոլում երկու օրուայ հիւանդութիւնից յետ ուղեղի հարւածից վախճանւեց Աստրախանի Մկրտումեան քահանան։

Հանգուցեալը այնտեղ գնացել էր իբրև քաղաքների միութեան Աստրախանի ներկայացուցիչ կոմիտէի լիազօր՝ տանելով իր հետ երկու վագոն հագուստ Կովկասի գաղթականներին տալու ազգի և կրօնի խտրութեան հաւասարապէս բաժանելու։

Աստրախանից անցնելով Բագու՝ ամբողջ 6 օր մնացել է այնտեղ շաբունակ աշխատելով ձեռք բերել վագոններ իրերը փոխադրելու և ատանալուց յետ անցել է Թիֆլիս նոյնպիսի աշխատանքով, մինչև որ մի մասը տարած իրերի բաժանել է Ալէքսանդրապոլի գիւղերում և քաղաքի գաղթականների մէջ, իսկ միւս մասը և գիւղերում։ Եւ մինչ իր միւսին Երևանում պատւաւոր կերպով վերջացրած ամսիս 5-ին Երևանից ճանապարհւում է Թիֆլիսի վրայով Աստրախան, հետևեալ օրը, ամսիս 9-ին Ալէքսանդրապոլի մօտ հինգ վագոնի մէջ յանկարծ զգում է սուր ցաւեր գլխում, առանում է ուղեղի հարւած, իջնում Ալէքսանդրապոլում մի—երկու օր մնալու և ապաքինւելու համար և ամսիս 9-ին առաւօտ օրը կնքում է իր մահկանացուն, առանց հնարաւորութիւն ունենալու որևէ բան ասելու—խօսելու, քանի որ կաթւածահար է եղել լեզուն և ամբողջ աջ մասը։

Հիւանդութեան լուրը առնելուն պէս՝ տեղերից փորը հանգուցեալի ... հետ ճանապարհւում է ... անդրպոլ և հասնում է միայն ... օրւայ նշխարներին։

Այնուհետև առաջնեց Աստ...

հեռագիր, ... փոխադրել ... ուղարկել է ... տեսել օրը ... ծման կար... Ալէքսանդրա... նալով ... գիւկը։

Գէորգ ք... ուել է Թիֆ... 1883—4 թ. ... տ. հասակու... թացքը և իր... դարձել է ... ծելու եռանդ... նակ Ղզլարի ... ուսուցչի և ու... ներ վարելուց ... խնդրով և բ... Աստրախանում ... հանայ իր նոր հա... նայի Ղզլարի ծխակ... համար։ Հազիւ 10 Ղզլարում և աւա Աստ... կաններին ընդհանուր ... ընտրութեամբ տեղա... րախան հանգ. Քա... հանայի ծուխը հա... դպրոցների կրօն... Այդ ժամանակներ... Արխատակէս ... ծում էր Աստր... տարարէլը նրա ... դամ ունեցաւ ... ներ, աշխատան... պայման պատ... թիւն՝ յանձին ...

Այնուհետև ... անհրաժեշտ ...

...պարէզում, ուր չլինէր ...

...յոնի չեն նրա գործերը։ ...ը գիմնազիաներում, ուր ...ական և օրէորդաց դըպ-...

...ը Աղքատանոցում։
...ը Հայուհեաց ընկերու-... հիմնած որբանոցի աչ-...րում։
...ը Կոնսիստորիայում։
...ը եկեղեցիների գործա-...

...րքերի խմբա-... և անհրաժեշտ ...

...ը գրող։
...ը բանաստեղծ և այլն, այլն։

...իր մխալան վերջացրած ...անցնում վերադառնում էր ... չարունակելու այսուհետ ... և նորանոր ձեռնարկու-... ...նակցելու, անզուգ մա-... մեզնից այնպէս շուտ, ...կարծ և անսպասելի։ ...ման իջաւ մի մարդ, որ ... գործելու սիրով, ...մարմ, լի հաւատով դէպի ...ապագան, դէպի փայլուն ...սիրած եղբայրների, որոնց ... արշալոյսը հեռուից ծա-...նաւ։
...անով։
... նրա համար աշխատելիս ...ակրներից սիրելի և ... ընկեր։

Գ. Բ- ԲԱՐՏԱՇԵԱՆ.



ՄԿՐՏՈՒՄԵԱՆԻ ՑԻՇԱՏԱԿԻՆ

[illegible]

ԳԷՈՐԳ Ք. ՄԿՐՏՈՒՄԵԱՆԻ ԹԱՂՄԱՆ ՀԱՆԴԷՍԸ.

Մայիսի 20-ին, ուրբաթ օրը, գիշերուայ 2 ժամին «Կաւկազ և Մերկուրիյ» ընկ. շոգենաւով Աստրախան ժամանեց՝ Ալէքսանդրապոլում վախճանուած Գէորգ ք. Մկրտումեանցի դիակը, որին դիմաւորեցին թաղման կոմիտէայի ներկայացուցիչները։

Միւս առաւօտ ժամի 8-ին նաւահանգիստ հաւաքուած կոմիտէայի անդամների և դիակին ուղեկցող Գուրգէն ք. Տէր-Բարսեղեանի ներկայութեամբ, որ ուղեկցել է դիակին Ալէքսանդրապոլից, դիակը շոգենաւից իջեցրին և նաւահանգստի հրապարակում քաղաքիս եկեղեցիների հոգեւորական դասի կողմից՝ խուռն բազմութեան ներկայութեամբ՝ առաջին պատշաճ կարգը կատարելուց յետոյ սկսուեց յուղարկաւորութիւնը դէպի Աստուածածնայ մայր եկեղեցին։ Առջեւից գնում էին պսակներ աշակերտաշակերտուհիները, ապա զգեստաւորուած հոգեւորականութիւնը և երկսեռ բազմութիւնը, որ գնալով աճում էր։ Դագաղը տանում էին դիակիրները, իսկ քառաձի դիակառքը հետեւում էր սգահանդիսին։

Նաւահանգստի սահմանից դուրս գալով սգահանդէսը Ալէքսանդրեան այգու մօտով և Բէլգորոդեան ու Պոլիցէյսկի փողոցներով անցաւ քաղաքիս կենդրոնական (Московская) փողոցը և գնաց դէպի մայր եկեղեցին՝ կանգ առնելով տղայոց գիմնազիայի և Շահվերդեան ուսումնարանի մօտ, իւր պաշտօնատեղերում հրաժեշտի աղօթք անելու համար։

Եկեղեցու մօտ ընդառաջ եկաւ երգեցիկ խումբը որի երգակցութեամբ դագաղը տաճար ներս տարան և տեղաւորելով ամբիոնի վրայ ծածկեցին ... պսակներով, որոնց թիւը հասաւ տասն և հինգի։ Պսակները գրուած էին հետեւեալ հաստատութիւնների և անձանց կողմից.

1) Ն. Ս. Շահվերդովայի աղջկերանց գիմնազիայի պաշտօնակիցներից.
2) Նոյն գիմնազիայի սանուհիներից.
3) Ա. գիմնազիայի հայ-աշակերտներից.
4) Բենդեմանի գիմնազիայի սանուհիներից.
5) Աստրախանի յօգուտ Կովկասի գաղթականների կոմիտէի կողմից.
6) Մոսկվայի բարեկամներից.
7) Ալէքսանդրոպոլի եղբայրական օգնութեան կոմիտէից.
8) Եղբայրական օգնութեան (էջմիածնի) կոմիտէից.
9) Գուրգէն քահ. Տէր-Բարսեղեանից.
10) Աւրամզեաններից ընտանիքից.
11) Առաքելեանների ընտանիքից.
12) Տէր-Արշէնից.
13) Մաղաքեաններից.
14) Փարեմուզովից և Գուլովից.

Ժամի 10-ից 20 րոպէ անց սկսուեց պատարագը շուտով եկաւ և թեմիս ս. առաջնորդը։ Բազմութիւնը գնալով աճում էր, այնպէս որ պատարագը վերջանալիս տաճարը ծայր է ի ծայր լիքն էր։ Պատարագից յետոյ հայր Տէր-Բարսեղեանը թախծալի և սրտաշարժ դամբանականով գըծելով հանգուցեալի բարձր արժանաւորութիւնները իբրև անձնուրաց ազգային և հասարակական գործիչ, բացատրեց Աստրախանի հայ հասարակութեան կորստեան անփոխարինելի լինելը։ Շատերն էին արցունքով օգրում անզուգական գործիչի վաղահաս մահը։

Հակիրճ և ազդու դամբանական ասաց նաև հայր Ս. Ճանճիկեանը, որ թւելով հանգուցեալի անչափ երախտիքը Աստրախանի հայ հասարակութեան վերայ, շեշտեց, որ այդ հասարակութիւնը բարոյական պարտականութիւն ունի նրա ընտանիքի հանդէպ։

Սոնից և պ. Վարթանեանը, որ համառօտ ակնարկ ձգեց հանգուցեալի հասարակական գործունէութեան, ...

առն, սկսած վաղ երիտասարդութիւնից մինչև վերջին օրերը։

Ճառախօսութիւններից յետոյ ս. առաջնորդը բոլոր հոգեւորականութեան հետ միասին զգեստաւորուած, հանդիսաւոր կերպով կատարեց հանգստեան կարգը, որ տեւարմեց մէկ և կէս ժամին։

Ապա նոյն հանդիսաւորութեամբ սգահանդէսը ուղեւորեց դէպի գերեզմանատուն, ճանապարհին կանգ առնելով հանգուցեալի բնակարանի առաջ, ազքատանոցի շինութեան մօտ քաղաքի ծայրում պատշաճ հրա եւտի աղօթքի համար։

Բազմութիւնից շատերը ուղեկցեցին մինչև գերեզմանատուն, կատարուեց վերջին կարգը և դիակը յանձնուեց սառ հողի ծոցին, պ.պ. Զաւէնի և Բունիաթեանի հրաժեշտի խօսքերից յետոյ։

Դ. Տ. Զ.



ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՄԱՒՈՐՆԵՐԻ ՎԵՑԵՐՈՐԴ ՎԱՇՏԻ Ա ՀԱՐՒԻՐԵԱԿԻ Ա ՑԻՍՆԵԱԿ.

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. Պոլսից հանուս են աքսորուած հայ ինտելլիգենցիայի ներկայացուցիչներից „Բիւզանդիոնի" խմբագիր Քէչեան, Մալումեան, դր. Տաղաւարեան, Վարդգէս և ուրիշները։ Բասէնում հրացանի են բռնուած 60 հայ զինուորներ մեղադրելով դաւաճանութեան մէջ։

— Կոնստանցա են եկել Թիւրքիայից փախած շատ հայեր։ Նրանք սոսկալի մանրամասնութիւններ են հաղորդում Թիւրքիայում տեղի ունեցող հայկական ջարդերի մասին։ Երբ Թիւրքական զօրքերը եկան Զէյթուն բոլոր հայ տղամարդիկ առանց բացառութեան սպանեցին. կանայք ինչպէս նաև անչափահասները բռնաբարեցին. հայկական քաղաքամասը կրակի ճարակ դառաւ։ Հայերը նոյն վիճակին ենթարկեցին նաև Այգեպի շրջանում։ Անդրիանապօլսում բազմաթիւ հայ վաճառականներ, ուսուցիչներ, փաստի կառավարիչը և այլ պետական հայ պաշտօնեաներ կախուեցին։ Երզնկայում մահուան պատժի են ենթարկել 24 հայ ուսանողներ, որոնց մօտ իբր թէ զէնք է գտնուել։ Օրմանեան եպիսկոպոսը Պոլիս գնալիս սպանուել է Թիւրք զինուորների կողմից ոստիկանի ներկայութեամբ։

(Р. В.)

— Թիֆլիսում տեղեկութիւն է ստացուած, որ Կիլիկիայի մի ամբողջ հայաբնակ գաւառ, հաւանօրէն Զէյթունը, ապստամբութեան դրօշակ է պարզել՝ հայ յեղափոխականների գլխաւորութեամբ։ Մանրամասնութիւնները պակասում են։

(„Մշ.")

ԳԵՏՐՕԳՐԱԴ. — Վերջին ամբողջ ամսուայ ընթացքում Հայաստանում տեղի է ունենում հայերի կատարած քիւրդերի և թիւրքերի ձեռքով սոսկանեան բէշխանութիւնների բացարձակ ատեսութեամբ ու երբեմն նրանց ուղղակի աջակցութեամբ։

Նոր ամսուի ապրիլի կէսին հայերի կատարած եղաւ Երզրումում, Բէրգոնում, Ակնում, Բիթլիսում, Մուշում, Սասունում, Զէյթունում և ամբողջ Կիլիկիայում։ Գիւղերն որն են բաշխած Վանի շրջակայքում հարիւրաւոր գիւղերի բնակիչները։ Վանի մէջ հայկական թաղը պաշարուած է քիւրդերով։ Միևնոյն ժամանակ Կ. Պոլսում թիւրքաց կառավարութիւնը կարգադրում է անսահման պայմանների է ենթարկում հայ խաղաղ ազգաբնակութեան։

Ի նկատի ունենալով այդ նոր սերբ-...

կութեան ու քաղաքակրթութեան դէմ, Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի դաշնակից կառավարութիւնները հրապարակով յայտարարում են Բ. Դրան, որ նրանք այդ ոճիրների անձնական պատասխանատուութիւնը դնում են թիւրքաց կառավարութեան բոլոր անդամների վրա և նրա տեղական իշխանութիւնների այն ներկայացուցիչների վրա, որոնք կատարածին մասնակից կլինեն։



ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՈՒԹԻՒՆԸ

Եւրոպական համալսարաններում գտնուող հայ ուսանողները բաւականին խոշոր թիւ են կազմում, որոնց մէջ առաջին տեղն են գրաւում տաճկահայերը։ Նամանաւանդ զգալի կերպով աճեց տաճկահայ ուսանողների թիւը սահմանադրութիւնից յետոյ։ Տաճկահայ երիտասարդութիւնը զուրկ միջնակարգ կանոնաւոր կրթութիւնից, յաճախ տարրական դպրոցի խղճուկ պաշարով, օգտուելով եւրոպական համալսարանների արեւմտեան ազատ դիւրութիւններից լցւում են բարձրագոյն դպրոցները որպէս խակական ուսանողներ կամ ազատ ունկնդիրներ։ Եւ սկսւում է ուսանողական տարիների անվերջ շարանը։ Հակառակ թափուած անհաւատ ջանքերին, նրանցից շատ քչերին է յաջողւում ձեռք բերած պաշարը մարսել, սխոլաստիկացիայի ենթարկել և վերջը մի կերպ քննութիւնները տալ և աւարտել։ Կան ուսանողներ, որոնք տասնեակ տարի չարչարւում են և վերջը սոխւած լինում առանց աւարտելու թողնել հեռանալ։ Այդ կողմից համեմատաբար բարձր է կանգնած ռուսահայ ուսանողութիւնը, որը ունի թէ աւելի լայն պաշար և թէ ինքնուրոյնութիւն, նամանաւանդ այդ հանգամանքը աչքի է ընկնում ընդհանուր ուսանողական կեանքում։

Եւրոպայի հայ ուսանողութիւնը ունեցել է մի ժամանակ գործունէութեան բաւականին լաւ մի շրջան։ Տարիներ առաջ գոյութիւն ունէր „Եւրոպայի հայ ուսանողութեան Միութիւն" իւր կանոնաւոր կազմակերպուած գրասենեակներով, գրական և քաղաքական արգիւնաւէտ գործունէութիւն, սակայն կուսակցական խնդիրները եկան տապալեցին այդ օգտակար միութիւնը որին երկար ջանքերից յետոյ հազիւ ...

Եւրոպայի գրեթէ ամբողջ հայ ուսանողութիւնը։ Սկանդալներով և գրեթէ բռնի կերպով լուծւած ընդհանուր միութիւնից յետոյ, ծնունդ առաւ այս անգամ զուտ կուսակցական մի միութիւն որը բաւականացաւ մի քանի համար „Ուսանողը" լոյս ընծայելով գլխաւորապէս ոչ—ուսանողների ... խատակցութեամբ և անկուսակցա... ուսանողական կասսաներից ինչ... պաշտպանութեան և այլ անուան ... դրամները իրենց կուսակցական ... ձարանը փոխադրելով, հաչւի չառ... լով, որ դրանով մեծ հարւած է տր... միացած ուսանողութեան կենսա... կարիքներին բաւարարութիւն տ... գործին։ Առանձնապէս աչքի էր ... նում նրանց եռանդը կազմակերպ... տրագիտոն հայկական երեկոյթնե... որոնք ամեն տեղ ուսանողական ... սաների եկամտի գլխաւոր աղբ... են կազմում։ Ուսանողութեան գլ... կից մասը սկսեց թողքել այդ ... օրերակ և անրնական երեւոյթի ... Առաջին օրինակը ցոյց տուեց Փ... զը։ Պոլսից եկած „Հայծ"-ի ուսա... գական խմբակը, եռանդուն ... սկսեց պայքարել Փարիզի ... ութեան վարչութեան դէմ, որի ... մասնութիւնը կազմւած էր ... ցականներից։ Կարճ միջոցու... խմբակին, որին միացան նաև ... ներից շատերը, յաջողւեց ... վարչութիւնը և ընդրել նորը ուսանողութեան շահերը իրենց սրտին աւելի մօտ համարող և հասարակական խընդիրները աւելի անշահասէրօրէն ըմբռնող անձերից։ Փարիզի օրինակին հետեւեց Լօզանը ուր վերոյիշեալ հողի վրայ սկսած պայքարը առաջ բերեց մի նոր աւելի կենսունակ և անկուսակցական ակադեմիկ միութիւն իւր հիմնած վերին աստիճանի օգտակար ուսանողական Տեղեկատու Բիւրոյով։ Նոյն պայքարը սկսեց նաև Մոնպէլիէում և այլուր։

Եւրոպայի հայ ուսանողութեան ներկայ բաժանւած և անկերպարան վիճակը սրբազան պարտականութիւն է դնում նրա գիտակից, թէև փոքրաթիւ, մասի վրայ վճռականօրէն պայքարել այն բոլոր ոչ—ցանկալի երեւոյթների դէմ, որոնք անվերջ խնդիրների, սկանդալների և երկպառակութիւնների առիթ են տալիս և միջոցներ ստեղծելու ուսանողութիւնը ներկայ տխուր վիճակից իւր կոչման բարձրութեանը հասցնելու համար։

ՈՒՍԱՆՈՂ

Փարիզ



ՖԵԼԻԵՏՕՆ

ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԸ *)

Գալիս են, գալիս, անթիւ, անհամար...
Շարժվում են առաջ, անվերջ, անդադար։
Որպէս կատաղի գարնան հեղեղատ
Ողողել են սար, ձոր ու անապատ
Մարդիկ, անասուն անխօս և խօսուն,
Ահի սարսուռից բարձած վայնասուն,
Անօթի, անքուն առաջ են մղվում,
Կեանք ազատելու սև ուղիներում։
Գալիս են նրանք՝ յուսահատ, վհատ.
Անթիւ ըկվածներ՝ կոյսեր ու հարսներ,
Մերկ ու բոկոտն ծեր ու մանուկներ,
Եւ ծնողազուրկ անտէր որբուկներ,
Եւ անմխիթար, սգւոր այրիներ։
Արիւն է ծորում նրանց սրտերից,
Արցունք է մաղվում տանջած աչքերից·
Ցրտից գոհացած, սառած ձեռն ու ոտք,
Ջախջախված գանգեր, սոված ստամոքս,
Ծծկեր մանուկներ մօր գրկում անկեանք,
Կազմում են սրանց դառը զարդարանք։
Եւ այդ սգաւոր վշտի թափօրը
Շարժվում է առաջ... մեր սահմանները...
—Բաղդաւոր մարդիկ, ազիզ եղբայրներ,
Ցոյս ենք որոնում, կեանք ենք աղերսում,
Տուէք մեզ մի որջ, ձգէք մեզ փշրանք,
Որ դառն օրհասին ապրել կարենանք...
Փախստականնե՛ր... սա՛ մեր անուն,
Թափառականնե՛ր... անտէր ու անտուն...
Ձեր շեմքը եկանք, ձեր դուռն ենք բաղխում,
Մեր կուշտ եղբայրներ, ձեր գութը հայցում...
Կենդան մնացինք, մի սուրբ ուխտ ունենք—
Դառնանք մեր երկիր, զարկենք, զարկվենք,
Մեր ազիզ վաթան սուր ու կրակից
Մեր արեան գնով նորից ետ խլենք։

Գ. ք. ՄԿՐՏՈՒՄԵԱՆ

*) Ներկայ ոտանաւորը հանգ. Մկրտումեան ք. տպագրել էր „Մշակ"-ում իւր մահից մի քանի օր առաջ։

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

Համաեւրոպական պատերազմը գնալով աւելի ծաւալւումէ։ Հակագերմանական կօալիցիային միացաւ նաև երրեակ Զինակցութեան նախկին անդամ Իտալիան, որը վերջապէս դուրս գալով իւր չէզոք դրութիւնից մայիսի 11-ին պատերազմ յայտարարեց Աւստրիային՝ հետևապէս Գերմանիային և Թիւրքիային։ Իտալիայի հրապարակ գալը, որին անխուսափելիօրէն պիտի հետևեն նաև Ռումինիան, Յունաստանը, գուցէ և Բօլգարիան, կարող է մեծ չափով նպաստել պատերազմի շուտափոյթ վախճանին, ուրեմն նաև տարիների ընթացքում Եւրոպային կապարի նման ճնշող պրուսական միլիտարիզմի ոչնչացմանը։ Աւստրօ-Գերմանիան իւր մօտալուտ անկումը զգալով լարում է բոլոր ուժերը և վերջին ճիգը թափում, փրկելու իւր գոյութիւնը։ Գալիցիայում և Շավլիի ուղղութեամբ ֆելդմարշալ Հինդենբուրգի հսկայ արշաւանքը, որը կարճատև յաջողութիւնից յետոյ այժմ յետ է նահանջում մեր բանակի ուժգին հարուածների տակ, Գերմանիայի վերջին խամփուշն էր։ Նոյննէ տեղի ունենում նաև արևմտեան ֆրօնտում, ուր անգլօ-ֆրանսական զօրքերը վերջերս տարան մի շարք փառաւոր յաղթութիւններ Իպրում, Շամպանում, Եպարճում, Արրասում և Էլզասում։

Իտալիային նոյնպէս հէնց սկզբից յաջողւեց գրաւել սահմանամերձ աւստրիական հողերը և զգալի հարւած հասցնել աւստրիական նաւատորմիղին։

Դարդանելի շուրջը դաշնակից պետութիւնների նաւատորմիղը և ցամաք հանւած զօրքերը, թէև խոշոր զոհողութիւններով, քայլ առ քայլ գրաւում են Թիւրքական ամրութիւնները և մօտենում Պօլսին։ Թիւրքական բանակը հակառակ Գերմանական օֆիցէրների թափած ջանքերին անկարող լինելով դիմադրել դաշնակիցների ուժեղ գրոհին յետ են նահանջում մեծ կորուստներ տալով։ Վերջին օրերը Պօլսի նաւահանգստում անսպասելի կերպով երևաց անգլիական մի սուզանաւ, որը անացին խուճապ առաջացրեց մայրաքաղաքում։

Կովկասեան ֆրօնտում մեր յաղթական բանակի առաջխաղացումը շարունակւում է։ Արդէն Վասպուրականի մեծ մասը գրաււած են մեր զօրքերի կողմից, որոնց մեծ աջակցութիւն են ցոյց տալիս ապստամբած տեղական հայ ազգաբնակութիւնը և կամաւորների խմբերը։ Ատրպատականում ևս մեր զօրքերը գրաւեցին Ուրմին, Միանդաբը և այժմ առաջանում են դէպի Սօուջ Բուլաղ։ Թուրք-գերմանական ինտրիգներին Պարսկաստանում վերջ դնելու նպատակով մի քանի օր առաջ Էնզելիում ափ հանւեցին և Ղազւին ճանապարհւեցին մեր զօրքերը թնդանօթներով։ Այդ քայլը կըգայ զգաստացնելու և վերջ դնելու պարսիկ կառավարութեան վերջերս բռնած երկդիմի և կասկածելի ընթացքին։



ԿՈՎԿԱՍԵԱՆ ԿԵՆՏՐՈՆԻՑ

ՄԻ ՆՈՐ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆ

(Մեր թղթակցից)

Թիֆլիս 11 ապրիլ։

Որչափ՞վ օդային տարածութեան մէջ սիրում ենք ճախրել։

Որքան անորոշ են մեզ համար մի շարք խնդիրներ։ Լրագիրներն ամեն յարմար բոպէին ընդգծում են մեր կուլտուրական հիմնարկութիւնների տարտամ կացութիւնը և շեշտում երբեմն ցանկալին։ Մասնաւոր շրջաններում քննադատական վերաբերմունքը մի ժամանցի բնոյթ է ընդունում, շատ անգամ էլ բաւականին առողջ տեսակէտներ երևան բերւում։ Մինչեւ բաւական է, որ նոյն խնդիրը հրապարակ գայ, և ահա ամենքի համար պարզ է լինում որ ատելիան վախ ու սարսափ է զգում մեր միտքը։

Այդպիսի վերաբերմունք մանաւանդ արտայայտւումէ գրեթէ անխտիր մեր հասարակական—կուլտուրական բոլոր հիմնարկութիւններում։ Ով կարողանում է, ով «քաջութիւն» ունի և համոզւածէ «իր շնորհի մէջ» առաջ է գնում որևէ հիմնարկութեան շէմքին. այդպիսին խոկոյն առաջարկ է ստանում և մասնակցել թատրոնական գործին և ժիւրիին և հրատարակչական ձեռնարկութիւններին....

Եւ որքան ներողամիտ է իրականութիւնը։ Մեր մասսան ոչ մի տեղեկութիւն չունի այդ տեսակ կուլտուրական ձեռներեցութիւնից, ուստի և իւրաքանչիւր առաջարկ համարւում է արտացաւ մարմնացում, գործի սէր և շնորհի նշոյլներ։

Այդպիսի մտքերը նորից և նորից պաշարեցին ինձ, երբ երէկ գնացի ցեղագիտական ստյանի հերթական նիստը։

Հաւաքւել էին ամենատեսակ մարդիկ՝ գրականագէտներ, դերասաններ, ժուրնալիստներ, ուսուցիչ, բժիշկ, բառ երևոյթին գործին ծանօթ դէմքեր— հնար բան չէ, սև ու սպիտակը զանազանել գիտեն, ուստի ինչպէս չ՛ցանկանալ լսելու թատրոնի բարդաւաճման խնդրի շուրջ մտքերի փոխանակութիւնը։

Ներկայ էին Բագւի Կուլտուրական Միութեան ներկայացուցիչներ տ. տ. Բուդաղեան և Կ. Բահաթրեան, բաւականին կիրթ հասկացողութեան և տեսակէտների տէր անձինք, որոնք եկել էին Թիֆլիս Դրամատիքական ընկերութեան վարչութեան հետ խորհրդակցելու՝ թատրոնի վերաբերմամբ կազմակերպելիք մի շարք հարցերի առթիւ։ Նրանք գիտեն ինչի մէջն է ցաւը, գիտեն ռեպերտուարի պակասաւոր կողմերը, ընդունումեն, որ թատրոնը մեր մէջ կարևոր ֆունկցիաներ ունի կատարելու։ Եւ որովհետև այդ նախաձեռնութիւնը երևան էր եկել Բագւի մտաւորականութեան կողմից, ես շատ հետաքրքրւեցի իմանալու թէ ինչ է մտածում Բագուն, և որ չափով նրա ներկայացուցիչները քաջութիւն կունենան խնդրին մօտենալու երես առերես։

Տ. Բահաթրեանի երկար բացատրութեան բնոյթը ինձ հնար տւեց ըմբռնելու այն տեսակէտները, որոնցով ներշնչւած են երկու ներկայացուցիչ—խօսողները։ Եւ պէտք է ասած՝ բաւականին որոշ կերպով ընդգծեց թատրոնի պակասաւոր կողմերը։

Տ. Բահաթրեան կէտ առ կէտ մատնանշեց մի շարք խնդիրներ. նա տւաւ հետաքրքրական և ճշգրիտ տեղեկութիւններ դերասանների անկազմակերպչութեան և մանաւանդ ռեպերտուարի մէջ իշխող մարդատեաց և հակագեղարւեստական պիեսների առթիւ. մատնանշեց, որ Բագւի և Շուշւայ պէս վայրերում նամանաւանդ փաստակար են բեմ հանել Ալյան-Բալասի, Դաւիթ-բէգ, Մելիքի աղջիկը և սրանց նման պիեսներ...

Գ. Շիրւանզադէ իր մերկացնող խօսքի մէջ շեշտումէ այն հանգամանքը, որ թատրոնի գործը բարձրացնելու հնարաւորութիւն չկայ, քանի որ նրա շուրջ հաւաքւածները իրաւունք են ստանում թատրոնի բաղդը տնօրինելու ոչ թէ իրանց պատրաստականութեան և տաղանդի շնորհիւ, այլ 3 ր. անդամավճար տալով։ «Ես պիտի ասեմ Բագւի հիւրերին, որ նրանք եկել են համերաշխ գործելու նրանց հետ, որոնք...»։ «Եթէ դուք մի առողջ խօսք կասէք մեր վարչական անդամներին, նրանք հազիւ թէ կարողանան ձեզ ըմբռնել...»։

Թատրոնական վարչութեան կազմին մօտ կանգնած Նազարէթեան խիստ յուզւում է Շիրւանզադէի անպայման ճիշտ բնորոշումներից։

Ներկայ վարչութիւնն էր—ընդգծումէ Նազարէթեան—որ Մանթաշեանի պէս մեկենասին մօտեցրեց թատրոնին, նպաստ տւաւ ու հնար ստեղծեց թատրոնը շարունակելու։

Թիֆլիսի Դրամատիքական Ընկ. ներկայ վարչութիւնը Նազարէթեանի պարզաբանութեամբ գրեթէ հսակի դեր է խաղացել այդ կողմից։ Ասպէս թէ այնպէս նրանց գործունէութեան պատմութեան էջերին կարող են նախանձել շատ գործիչներ։


Մի նոր ձայն բերեց բժ. Լ. Աթաբեկեան բայց հանդիպեց մի գլխիկոր լռութեան։

«Փորձեցէք Բագւում—ասում էր նա մօտենալ բանւորութեան, հրաւիրեցէք նրանցից մէկին ու մէկին ձեր կազմի մէջ, մօտեցրէք թատրոնը նրանց ճաշակին ու պահանջին..»։

Յիշւած խօսողները երևի երբէք մտքներումն էլ չէին անցկացրել այդպիսի մի խնդիր, հակառակ դէպքում հազիւ թէ կարողանային այնպէս եռանդուն թափով պաշտպանել ներկայ թատրոնի մի շարք բացասիկ կողմերը, նրան սնունդ մատակարարելու անբաւարար միջոցները, նպաստող մեկենասների ձեռքի փշրանքներին նայելը...

Դրանք չեն համակրում այն միտքը, որ թատրոնը կարելի է մօտեցնել բանւորին կամ ժողովրդական խաւերին.. Բայց ինչ են ուզում—այդ իրենք գիտեն միայն։

Յ. ՍՈԼՈՎԵԱՆ



ԼՈՒՐԵՐ

◆ Աստրախանի հայկական կոմիտէտը ստացել է էջմիածնից հետեւեալ հեռագիրը՝ „Վանի, Մանազկերտի շրջանները ազատւած են թրքական լծից, մեծ թւով փախստականներ, վերադարձողներ օգնութեան կարիք ունեն, կազմակերպւումէ եղբայրական օգնութիւն տեղում, Նորին Սրբութեան հրամանով Դիւանատունը և գլխաւոր Կարգադրիչ Կոմիտէտը խնդրում են նիւթական աջակցութիւն ցոյց տալ"։ Մայիս 18-ի նիստում կոմիտէտը որոշեց անմիջապէս հեռագրով փոխադրել էջմիածին 3000 րուբլի։

◆ Նիւթական օգնութիւն հասցնելու նման հեռագիր տեղական կոմիտէտը ստացել էր նաև Ազգային Բիւրօյից։ Սակայն Աստրախանի կոմիտէտը որոշեց Թիֆլիսի բիւրօյին ոչ մի կոպէկ չուղարկել մինչև որ այդ վերջինը չը ներկայացնէ իւր հաշւետւութիւնը։

◆ Այսօր Պօղոս և Պետրոս եկեղեցում տեղի կ'ունենայ գոհաբանական մաղթանք Վանը մեր զօրքերի կողմից գրաւելու առթիւ։ Մաղթանքից յետոյ տեղի կունենայ հոգեհանգիստ ընկած զինւորների յիշատակին։

◆ Ժողովրդական համալսարանների խորհուրդը վճռել է մօտիկ ապագայում կազմակերպել մի շարք ժողովրդական, լայն մասսաներին մատչելի դասախօսութիւններ։ Դասախօսութիւնների իբրև նիւթ ծառայելու է ներկայ պատերազմը։ Պիտի դասախօսեն բժիշկ Բայնեար նիւթ ունենալով „պատերազմը և ժողովրդական առողջութիւնը", փաստաբան Սարաբեանովը—„պատերազմը և ապրուստի թանկութիւնը"։

◆ Մայիսի 29, 30 և 31-ին Աստրախանում կայանալու է երեքօրեայ ժողովարարութիւն յօգուտ ծայրագաւառների պատերազմից վնասւած ազգաբնակութեան։

◆ Վերջերս թէ Կովկասից և թէ Պարսկաստանից մեծ քանակութեամբ ոգելից խմիչքներ են բերում Աստրախան և գաղտնի կերպով վաճառում։ Ոստիկանութիւնը շատերի մօտ խմիչքը գրաւել է և պատշաճ արձանագրութիւններ կազմել։

◆ Քաղաքային ծառայողները, կենսական մթերքների թանկութեան պատճառով ընկնելով ծանր դրութեան մէջ, դիմել են քաղաքագլխին խնդրելով ռոճիկների յաւելումն։

ԿԵՆՍԱԿԱՆ ՄԹԵՐՔՆԵՐԻ ԹԱՆԿՈՒԹԻՒՆԸ ԱՍՏՐԱԽԱՆՈՒՄ

Որպէս անխուսափելի հետևանք ներկայ քաղաքական կացութեան, կենսական մթերքների գները, ինչպէս ամենուրեք նոյնպէս և Աստրախանում օրէ ցօր աճումեն։ Թէ իշխանութիւնները և թէ քաղաքային օրգանները ու հասարակական հիմնարկութիւնները բոլոր տեղերում ամեն ճիգ [illegible] փում են կռւելու այդ չարիքի [illegible] սակայն ոչ սակագների հրատարակութիւնը և ոչ էլ քաղաքային վար[illegible]թիւնների ու ոստիկանական հսկողութիւնը գրեթէ անզօր են հանդ[illegible]նում չափ ու սահման դնելու անխիղճ վաճառողների անսահման ախ[illegible]ժակներին։ Ամեն կարգի սպ[illegible]ղներ օգտւելով առիթից [illegible] տականօրէն ուռցնումեն գները, յաճախ անլսելի վիճակի մէջ [illegible] սպառողին։ Դժբաղդաբար, կեն[illegible] մթերքների թանկութիւնը [illegible] ծանր կերպով ընկնումէ հասար[illegible] թեան միջին և ստորին խաւերի [illegible] աւելացնելով նրանց սառ[illegible] համեստ բիւջէի վրայ մի խոշոր [illegible] Ի նկատի ունենալով այդ հանգամ[illegible]քը, մօտ օրերս Աստրախանի [illegible] կատարների ընկերութիւնը [illegible] ացրել է քաղաքային վարչու[illegible] հետևեալ յայտարարութիւնը՝ «կեն[illegible]կան մթերքների հետզհետէ թանկութիւնը զգալի կերպով [illegible] է Աստրախանի ազգաբնակու[illegible] բիւջէի վրայ։ Առաւելապէս դա [illegible] է ազգաբնակութեան այն [illegible] մար, որը ապրումէ որ՚ի փոքր [illegible] ներով։ Այդ պատճառով Աստրա[illegible] առևտրա—արդիւնաբերական ծա[illegible] ողները, որոնց ռոճիկները [illegible] անփոփոխ, ստիպւած լինելով վերջին իրենց միջոցների 40—50% ծախսել, չեն կարող անտարբեր դէպի առաջացած գների ան[illegible] բարձրութիւնը։ Դրա դէմ կ[illegible] համար զեկուցագիրը [illegible] հրաժեշտ են համարում յայտն[illegible] տեսեալը՝ թանկութեան դէմ [illegible] համար ծրագրւած միջոցների [illegible] ծառայողները համարում են [illegible] հաստատումը միայն հասարա[illegible] կազմակերպութիւնների և հիմ[illegible] թիւնների ներկայացուցիչների [illegible] նակցութեամբ ստեղծելով հա[illegible] կական մի օրգան նոյն հասա[illegible] կան ուժերից բաղկացած, որը [illegible] առևտրականների կողմից, որ[illegible] սակագների գործադրութեան [illegible]

Գործակատարների Միութիւն[illegible] դրւմ է քաղաքային վարչու[illegible] դումայի համաձայնութիւնը [illegible] լով հրաւիրել Աստրախանում [illegible] թիւն ունեցող հասարակական [illegible] առևտրական կազմակերպութիւն[illegible] ու հիմնարկութիւնների ինչպէս [illegible] ազգաբնակութեան կենսական [illegible] ներ հայթայթելու գործով [illegible] ղւած անձնաւորութիւններին [illegible] ւած մի ժողով և երկարող [illegible] ների կողմից. որոշւած սակագ[illegible] ճշդութեամբ գործադրելու հ[illegible] թեան համար, հիմնել հակի[illegible] գան նոյն հասարակական կազ[illegible] պութիւններից։

Խմբագիր հրատարակիչ՝
ՎԱՀԱՆ ՂՈՒԿԱՍ[illegible]
Ред.-изд. В. Тукас[illegible]

Дозволено военной цензурой. [illegible]хани. Литографія Т-во „Печатн. Дѣла" Окуръ, Апресянцъ и Винниковъ.